[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ապրանքների մատակարարման)	[2] Սերիա	[3] Համար
8	Օգոստոս	2016 թ.		U	0014075416
[4] Մատակարարման ամսաթիվ					
8	Օգոստոս	2016 թ.	Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») — հատուկ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	[7] [8] [9]
[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					

Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի	
[11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 8 3 5 2 5 6
[12] Անվանումը	«ՍԼԱՎ ՄՈԹՈՐՍ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 8 3 5 2 5 6 / 1
[14] Բանկային տվյալները	Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան N 21700-001-223338-001
[15] Գտնվելու վայրը (հասցեն)	Երևան Ծ. Իսակովի 22/2
[16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են	ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 32/1
[17] Լրացուցիչ տվյալներ	000096՝ Տեխսպասարկման ծառայության վճար

Ապրանքներ ձեռք բերող անձի		
[18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 0 0 1 8 3 5 7	
[19] Անվանումը	ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)	
[20] Բանկային տվյալները		N
[21] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 10	
[22] Լրացուցիչ տվյալներ	Audi Q7 001OS01	
[23] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	
[24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը	ինքնաառաքումով	
[25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	-	

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

Հ	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Տեխսպասարկման ծառայության վճար	Աժ	4.727	14998.942	70900			70900
2	Շարժիչի յուղ	լ	11	5833.334	64166.67	20	12833.33	77000
3	Յուղի ֆիլտր	հատ	1	17916.667	17916.67	20	3583.33	21500
4	Տափօղակ	հատ	1	666.667	666.67	20	133.33	800
5	Վառելիքի ֆիլտր	հատ	1	70833.334	70833.33	20	14166.67	85000
6	Մաքրող միջոց	հատ	3	2500	7500	20	1500	9000
7	Մաքրող հեղուկ	հատ	1	6083.33	6083.33	20	1216.67	7300
8	Արգելակման հեղուկ	լ	1.5	4166.667	6250	20	1250	7500
9	Արգելակոճ	հատ	1	126666.667	126666.67	20	25333.33	152000
10	Տվիչ	հատ	2	10000	20000	20	4000	24000
11	Տվիչ	հատ	2	10000	20000	20	4000	24000
12	Արգելակոճղակ	հատ	1	112500	112500	20	22500	135000
13	Հակասառիչ հեղուկ	լ	0.5	3333.334	1666.67	20	333.33	2000
Ընդամենը					525150.01	X	90849.99	616000

Դուրս գրող՝ AVETISYAN LILIT 7803840540
անունը, ազգանունը

Ստացող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սլավ Մոթորս ՓԲԸ-ի կողմից ՀՀ սահմանադրական դատարանին պատկանող 001OS01 պետհամարանիշով ԱՈՒԴԻ մակնիշի ավտոմեքենայի/ձեռք բերման փվյալները ներկայացրել են մեր 19.09.2016թ. Ա-584 գրությամբ/ սպասարկման ծառայությունների՝ 08.08.2016թ. Ա 0014075416 հարկային հաշվի ուշացումով մուտքագրումը համակարգ պայմանավորված է գնումների անվանացանկի փոփոխության գործընթացի հետ, որը չի անդրադարձել կողմերի փոխադարձ շահերի վրա:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա - 580
29.09.2016թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1

Ք. Երևան «01» հունիսի 2015թ.

«ՀՀ Սահմանադրական դատարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Սլավ Մոթորս» ՓԲԸ (Audi AG անմիջական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում) այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնրեն Ա. Գալստյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է նրան մատուցել ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ և աշխատանքներ՝ Պատվիրատուի Audi Q7 (պետ.համարանիշ 001OS01) մակնիշի ավտոմեքենաների գծով:

1.2. Պատվիրատուն պարտավորվում է 1.1. կետում նշված ծառայությունների համար վճարել սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը՝

2.1.1. մատուցում է սույն պայմանագրի 1-ին կետում նախատեսված ծառայությունները,

2.1.2. վերանորոգման ծառայությունները մատուցում է Պատվիրատուի հայտերի հիման վրա.

2.1.4. ինքնուրույն որոշում է ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պահեստամասերի անվանացանկը.

2.1.5. կախված հայտերի ծավալից, ինքնուրույն որոշում է հայտերի կատարման ժամկետները:

2.1.6. անհրաժեշտության դեպքում իրավունք ունի սույն պայմանագրի պարտավորությունների կատարման համար ներգրավել երրորդ անձանց:

2.2. Պատվիրատուն՝

2.2.1. Կատարողի ծառայությունների համար վճարում է սույն պայմանագրի 4-րդ կետում նախատեսված չափով և ժամկետներում.

2.2.2. Կատարողին ժամանակին հաղորդում է ավտոմեքենայի վրա կատարված ընթացիկ աշխատանքների մասին.

2.2.3.Կատարողին ներկայացնում է տեխսպասարկման ծառայության մատուցման հայտեր:

3. Մատուցված ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

3.1. Կատարված յուրաքանչյուր գործի համար Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտ՝ հարկային հաշիվ:

3.2. Ակտում նշում է մատուցված ծառայությունների անվանացանկը և արժեքը.

3.3. Ակտում կարող է ներառվել ցանկացած այլ տեղեկություն, որոնց մասին կողմերը անհրաժեշտ կհամարեն նշել:

4. Կատարողի ծառայությունների վճարման չափը և կարգը

4.1. Սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների արժեքը կորոշվի ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման ակտով:

4.2. Մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից ոչ ուշ, քան երեք բանկային օր հետո՝ Պատվիրատուի կողմից Կատարողի հաշվարկային հաշվին միջոցները փոխանցելու միջոցով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետով:

5.3. Տեխնիկական սպասարկման պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին՝ մեկ ամիս առաջ նախազգուշացնելով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության

միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի համաձայնությամբ:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում այն լուծվում է դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ՝	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
« Սլավ Մոթորս » ՓԲԸ	«ՀՀ Սահմանադրական դատարան»
ՀՀ. Ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22/2	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 10
ՀՎՀՀ 01835256	ՀՎՀՀ 00018357
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ	
Հ/Հ 001 – 223338 - 001	
Տնօրեն՝ Ա.Գալստյան	
Ստորագրություն՝	Ստորագրություն՝
Կ.Տ.	Կ.Տ.

Թարգմանություն գերմաներենից

«ԱՈՒԴԻ» ՄԱԿՆԻՇԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ԱՈՒԴԻ» բաժնետիրական ընկերությունը, Դ-85045 Ինգոլշթադթ
- այսուհետև՝ «Մատակարար»,

և «ՍԼԱՎ ՄՈԹՈՐՍ» փակ բաժնետիրական ընկերությունը,
Ծովակալ Իսակովի պողոտա 22/2,
0004 Երևան, Հայաստան
- այսուհետև՝ «Անմիջական ներկայացուցիչ»,

կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Ըստ թիվ 1 հավելվածի՝ Մատակարարը «ՍԼԱՎ ՄՈԹՈՐՍ» ՓԲ ընկերությանը «Հայաստան» պայմանագրային տարածքում թիվ 2 հավելվածում սահմանված կարգով (այսուհետ - «Պայմանագրային տարածք») նշանակում է «ԱՈՒԴԻ» մակնիշի պայմանագրային ծրագրի (այսուհետև՝ «Պայմանագրային ծրագիր») իրականացման Անմիջական ներկայացուցիչ:

   Անմիջական ներկայացուցիչն իրավասու է Պայմանագրային տարածքում Մատակարարի գրավոր համաձայնությամբ ստեղծել առևտրային՝ ցանց: Մանրամասնությունները, հարկ եղած դեպքում, պետք է շարադրվեն Արձանագրության մեջ /այսուհետև՝ «Արձանագրություն»/:

   Անմիջական ներկայացուցիչը պետք է իր պայմանագրային տարածքում օգտագործի իրացման բոլոր հնարավորությունները, պահպանի Մատակարարի, Վաճառող կազմակերպության և «ԱՈՒԴԻ» մակնիշի պայմանագրային ծրագրի բարի համբավն ու արժանիքները, ինչպես նաև, կազմակերպված և տեխնիկապես հագեցած հաճախորդների սպասարկման միջոցով իրագործի «ԱՈՒԴԻ» մակնիշի պայմանագրային ծրագիրը: Սույնը տարածվում է նաև «ԱՈՒԴԻ» մակնիշի այն ապրանքների վրա, որոնք շրջանառության մեջ են Ներկայացուցչի Պայմանագրային տարածքում և վերջինիս կողմից չեն վաճառվում: Սույն պարտականության իրականացման համար Ներկայացուցիչը նախ և առաջ պետք է ձևավորի համապատասխան թվով և որակով աշխատակազմ:

   Մատակարարն իրավասու է սահմանելու իրացման և հաճախորդների սպասարկման հետ կապված արտադրական և նյութական նախապայմանները:

2. Մատակարարն իրեն իրավունք է վերապահում փոփոխել Պայմանագրային տարածքը, և/կամ նշանակել նույն Պայմանագրային տարածքում Ներմուծողներ, Ներկայացուցիչներ և/կամ այլ Պայմանագրային գործընկերներ, ինչպես նաև Պայմանագրային տարածքում Երրորդ կողմի հետ

ՄԱՆՈՒԿՅԱՆ Մ. ԹԱՐԳՄԱՆԻՉ